

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆՈՐ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ հանրապետության գիտությունների ակադեմիայի մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը բաժանվել է երկու ինքնուրույն գիտական հիմնարկի: Այդ կապակցությամբ ՀՀ-ի թղթակիցը դիմեց ակադեմիայի փոց-պրեզիդենտ, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Մ. Մերզլյանին՝ խնդրելով պատմել վերակառուցման նպատակի, նոր ինստիտուտների առջև դրված խնդիրների մասին:

— Մաթեմատիկան և մեխանիկան Հայաստանի գիտության առավել զարգացած և հեռանկարային ուղղություններից են, — ապաց գիտնականը: — Վերջին քսուորը դարում այդ գյուղերում ձեռք բերված արդյունքները մասշտաբ են գտել ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից շատ հեռու:

Միջազգային գիտական շրջաններում լայն անաչառում ունեն հայկական մաթեմատիկական քայրոցի ներկայացուցիչների աշխատանքները ֆունկցիաների տեսության, դիֆերենցիալ հավասարումների, ֆունկցիոնալ վերլուծության, մաթեմատիկական տրանսպարանության և ազդրիթմների տեսության բնագավառում: Ֆրանսիայի քոլորը տեսական բնույթ ունեն, բայց այդ ապարեղում ձեռք բերված հաջողությունները զգալիորեն մասնակ է են հանրապետության գիտության ու տեխնիկայի մի շարք ժամանակակից կիրառական գյուղերի հաջող զարգացմանը, ինչպիսիք են, օդերևակ, էլեկտրոնային հաշվողական տեխնիկան, կիրառական մաթեմատիկան, ռադիոէլեկտրոնիկան և այլն:

Համընդհանուր անաչառում են

գտել հայ մեխանիկաների աշխատանքները: Նրանք իրավամբ համարվում են սուղիի հատկություններ ունեցող հնացող գյուղերի տեսության հեղինակները: Այդ տեսությունը կարևոր նշանակություն ունի երկար ժամանակ մեծ բեռնվածության տակ աշխատող ինժեներական խոշոր կառուցվածքների հաշվարկման համար: Նավաշինության, ինքնաթիռաշինության և մեքենաշինության այլ գյուղերում կիրառություն են գտնում անհզուրուպային շերտավոր թաղանթների և ապրիի բնագավառում մեր գիտնականների կատարած հետազոտությունների արդյունքները: Միատարր և ոչ միատարր մարմինների առանցակառության մաթեմատիկական տեսության որոշ խնդիրների լուծումը զգալի դեր է խաղում համատարած միջավայրերի մեխանիկայի ֆունկցիոնալ մոտեցումը օրինակությունները կարգելու գործում:

Հայաստանի մեխանիկաների մշակված թեմաների արժեքավորության և հրատարակության վերաբերում է նրանց բազմաթիվ աշխատությունների թարգմանությունը օտար լեզուներով:

Մաթեմատիկայի և մեխանիկայի բնագավառում հետազոտությունների ինտենսիվ զարգացումը, դրանց հեռանկարայնությունն ու հրատարակությունը, մեծ թվով որակյալ գիտական կարգերի աշխատությունը մեզ հիմք տվեց մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը բաժանելու առանձին հիմնարկների:

Իսկ ինչո՞վ են զբաղվելու Հայաստանի գիտությունների ակադեմիայի նոր ինստիտուտները: Նրանք մախ և ստաշ կարունակեն զարգացնել այդ գիտությունների արդեն ավանդական դարձած ուղղությունները: Միաժա-

մանակ կատեղծվեն բաժիններ, լաբորատորիաներ, սեկտորներ, որտեղ նախատեսվում է աշխատանք կազմակերպել մեր հանրապետության համար նոր թեմաների և պրոբլեմների ուղղությամբ:

Այսպես, մեխանիկայի ինստիտուտում հետազոտություններ կծավալվեն սուղիի ոչ գծային տեսության, ոչ միատարր մարմինների դինամիկ ամրության, բիոմեխանիկայի և այլ ուղղություններով, որոնք, նարստացնելով ժամանակակից գիտությունը, միաժամանակ մեծ դեր են խաղում տեխնիկայի կարևոր պրոբլեմները լուծելիս:

Մաթեմատիկայի ինստիտուտում ենթադրվում է առաջիկա հինգ տարիներին բաց անել տուպոլոգիայի և հանրահաշվի, հավանականության տեսության, մաթեմատիկական վիճակագրության և մաթեմատիկական ֆիզիկայի բաժիններ: Հատուկ ուշադրություն կգարձվի երիտասարդ, ընդունակ մասնագետներին գիտական աշխատանքի մեջ ներգրավելու: Նախատեսվում է ամրապնդել և ընդլայնել ակադեմիայի այդ հիմնարկի կապերը Երևանի պետական համալսարանի՝ գլխավորապես մաթեմատիկայի և մեխանիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների հետ:

Համատեսակի արանք են ակադեմիայի հետազոտական նոր կենտրոնների առջև դրված խնդիրները: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ մեր մաթեմատիկոսներն ու մեխանիկները այսուհետև կա կաշխատեն նույնպիսի արդյունավետությամբ, հայրենական գիտությունը կհարստացնեն հետաքրքրական նոր արդյունքներով: